

ՓԻԼԻՍՈՓԱՅ ՍՈՑԻՕԼՈԳ

Փիլիսոփային մի կողմը թողնենք և դիմենք սոցիօլոգին,
հասարակագէտին:

Բնազանցական ու բնափիլիսոփայական սպեկուլեացիան
ներով հարուստ է մարդկութիւնը, այնինչ քչերն են մեծ հան-
ճարներից լրջօրէն զբաղուել մարդկային հասարակութեամբ,
նրա էութիւնով, նրա աստիճանական զարգացման օրէնքներով:

Աննման վարպետութեամբ Հերքերտ Սպենսեր միացը-
նում է իր մէջ մեր տեսութեան ճակատին դրուած երկու տիտ-
ղոսները: Երկուսն էլ կազմում են նրա հոչակն ու հմայքը: Իբ-
րև սոցիօլոգ, նա հիմնեց շկոլա և ունեցաւ հետևողների ու եր-
կրպագուների լէզիօններ: Այսօր ևս, չնայած որ արդէն բաւա-
կանաչափ հնացել, մաշուել են նրա հիմնական հայեցակէտերը,
Սպենսերի ճնշող հեղինակութիւնը, իբրև սոցիօլոգի, տակաւին
զգալի է գիտական աշխարհում:

Սոցիօլոգիան մի նորաբողբոջ գիտութիւն է, և նրա նիւ-
թը՝ վերին աստիճանի կնճռոտ: Նա ընդգրկում է մարդկային
բոլոր հասարակութիւնները՝ տարբեր տեղերի և ժամանակնե-
րի: Նա ուսումնասիրում է հաւասարապէս մեծ հետաքրքրու-
թեամբ՝ և ամերիկական կարմրամորթներին, և աֆրիկական
ու աւստրալիական վայրենիներին, և եւրոպական հին ու նոր
քաղաքակրթութեան պատկանող ազգերին:

Բարձր, առաջադէմ հասարակութիւնները ճամսաչելու հա-
մար՝ անհրաժեշտ է ծանօթանալ նախապատմական վայրենի
ու բարբարոս համայնքների հետ, որովհետև նրանց վայրենու-
թիւնից ու բարբարոսութիւնից է առաջացել մեր քաղաքակըր-
թութիւնը:

Սոցիօլոգիան առանձին ուշադրութեամբ ուսումնասիրում
է հասարակական «սկզբնաւորութիւնը» (les origines). ընտանիք,
սեփականութիւն, իրաւունք, կառավարութիւն, պետութիւն,

կրօն, բարոյականութիւն և այն, —այդ բոլորի ծագումն է վինտոռում և աշխատում է բացատրել նրանց աստիճանական զարգացումը կամ էվոլյուցիան։ Մարդկային նախնական հորդաներից նա բարձրանում է մինչև քաղաքակրթութեան գագաթնակէտը, քննելով հասարակութիւնները առանձին-առանձին, իրանց Փիզիքական ու սոցիալական միջավայրերում, իրանց աճման ու զարգացման պրոցեսում, ապա քննում է ըոլոր այլազան հասարակութիւնները իրանց փոխադարձ յարաբերութիւնների մէջ, սահմանում է նմանութիւններ և այդ համեմատական ուսումնասիրութիւնից աշխատում է սինթէզ անել, գործո բերել ընդհանուր օրէնքները, որոնք ղեկավարում են համայն մարդկութեան էվոլյուցիան։

Օրէնքներ մշակել բաց անել այն, ինչ որ կոչւում է պատճառականութիւն երևոյթների մէջ, դա առաջին պայմանն է գիտութեան ամեն մի ճիւղի. գիտութիւնը միայն դրանով է գիտութիւն։ Դժուար է ասել, թէ իրագործուած լինի սոցիօլոգիայի այդ հիմնական ձգուումը՝ գուրս բերել մարդկային էվոլյուցիայի ընդհանուր օրէնքները։ Սոցիալական աշխարհում երեւոյթները աւելի բարդ են, քան բնութեան մէջ, այդ պատճառով սոցիօլոգիայում այնպէս դիւրութեամբ չեն մշակում օրէնքները, ինչպէս բիօլոգիայի, կամ Փիզիկայի ու քիմիայի մէջ։

Երբ մենք ասում ենք՝ ծգողութիւն՝ (attraction) հասկանում ենք մի երևոյթ, ոս ինքն իրան հաւասար է ամեն տեղ և ամեն ժամանակ. նա իշխում է նոյնութեամբ տիեզերքի ըոլոր ծայրերում, նա օրէնք է։ Նոյնպիսի օրէնքներ են բիօլոգիայի մէջ գոյութեան կրի իրողութիւնը, ժառանգականութեան ու յարմարման երևոյթները և այն։

Որքան գտուար է գտնել մի այնպիսի օրէնք, որի զօրութիւնը տարածուէր համայն մարդկութեան և նրա առանձին ընտանիքների վրայ։ Երկրագնդի երեսին սփռուած անթիւ մարդկային համայնքները իրանց աշխարհագրական միջավայրերով, ցեղական-ազգայնական առանձնայատկութիւններով, մտաւոր, բարոյական, քաղաքական և այլ պայմաններով՝ այնպիսի մեծ այլազանութիւն են ներկայացնում, որ նրանց բոլորի համար զարգացման ընդհանուր օրէնք գտնելը առաջին հայեացքից թւում է երազ, ուտոպիա։

Աւելացրէք և այն՝ որ հասարակական երևոյթների ուսումնասիրութիւնները առհասարակ սուրեկտիւ են լինում. սոցիօլոգների մէջ գրեթէ միշտ դեր են խաղում անհատական որոշ համակրանքներ ու հակակրանքներ կամ որոշ շահեր՝ աղ-

դայնական, դասակարգային, կուսակցական՝ որոնք դժուարացնում են անաշառ, օբեկտիվ ուսումնասիրութեան գործը:

Նկարագրել պաղ ու անտարբեր կերպով տիեզերական երևոյթները, աստղաբաշխական, երկրաբանական յեղաշրջումները, անասնական աշխարհի գոյութեան աւերիչ կոիւները և այլն—դիւրին բան է: Բայց նոյն չափով սառնաօիրու մնալ ի տես մարդկային պատմութեան արհաւիրքների, դարաւոր բնաջնջող պատերազմների ու արիւնեղութիւնների, ստրկութեան և ծովածաւալ թշուառութեան, մասսային հարստահարումների, սովի, բոնակալական սարսափների, ժողովրդային արիւնահեղ բանկումների, որոնք, աւանդ, սկզբից մինչև վերջ լցնում են նախապատմութեան և պատմութեան էջերը, նկարագրել այդ բոլորը անդամահատող անսատումիստի անխոռվ հանդարտութեամբ—գրեթէ անհնարին է:

Ահա թէ ի՞նչու այնքան դժուարին է սոցիօլոգի պաշտօնը, և ահա թէ ի՞նչու սոցիօլոգիան, իր հիմնադիր Օգիւստ Կոնտի արտայայտութեամբ, հանդիսանում է ամենակնճոռը գիտութիւնների երկրածիգ սանդուխքի վրայ:

Մպենսերն անգամ իր հսկայածաւալ ու օբեկտիվ ուսումնասիրութիւններով, իր գիտական հազուագիւտ դիսցիպլինով չկարողացաւ խուսափել մարդկանց դատաստանից.—Նրան հոչակեցին բուրժուազիայի սոցիօլոգ, իշխող դասակարգի շահերի փաստաբան:

Մարդիկ աւելի և հեռու գնացին և դասակարգային շահերի անգիտակից ջատագով գտան նոյնիսկ յանձին Մպենսերի մեծ ուսուցչի՝ աշխարհահոչակ բիօլոգ Դարվինի: Այդ կարծիքն էին յայտնում 1877 թուին, մի տաք բանակուրի մէջ, գերմանացի երեք հոչակաւոր բնագէտներ՝ Վիրխով, Հէկկել և Օսկար Շմիդտ:

Բնագիտական թէօրեաներն էլ կարմա են, ընթերցող, խըրախուսել մէկ կամ միւս սոցիալական դասակարգի շահերը... Խիստ տարօրինակ է թում այդ: Այսուամենայնիւ, այդպէս պնդում էին երեք մեծանուն գիտնականները: Վիրխով, որ մինչև վերջը մնաց հակադարվինեան, յայտարարում էր, որ դարվինիզմը, մարդու ծագման վարդապետութիւնը ուղղակի առաջնորդում է դէպի հաւասարութեան վտանգաւոր թէօրիաները: Հէկկել և Շմիդտ պնդում էին ընդհակառակը, որ եթէ դարվինիզմին կարելի է վերագրել որևէ քաղաքական-սոցիալական տեսնդենցիա, ապա այդ վերջինը կարող է միայն լինել արիստոկրատական, երբէք ուսմկավարական:

«Դարվինիզմը, ասում է Հէկկել, բացարձակապէս յայտա-
Մայիս, 1905.

բարում է, որ անհատների հաւասարութիւնը անկարելի է և երազական, որ նա գոնուում է կատարեալ հակասութեան մէջ այն անհրաժեշտ անհաւասարութեան հետ, որ գոյութիւն ունի իրօք ամեն տեղ:

«Ի՞նչպէս անասնական, այնպէս էլ մարդկային հասարակութեան մէջ, երբէք չեն կարող հաւասար լինել ոչ իրաւունքներն ու պարտականութիւնները, ոչ բարիքներն ու վայելքները... Ընտրողութեան թէօրիան ուսուցանում է, որ մարդկութեան կեանքում ևս,—ի՞նչպէս ըսյսերի ու կենդանիների մէջ —միշտ, և ամեն տեղ, միմիայն մի չնշին, առանձնաշնորհեալ փոքրամանութիւն կարողանում է ապրել ու զարգանալ, այնինչ ահապին մեծամասնութիւնը ընկճւում ու կորսւում է շատ թէ քիչ վաղաժամաւր:

«Դաժան, անողորմ «գոյութեան կուիւր», որ աւերածներ է անում ամեն տեղ չնշաւոր բնութեան մէջ, ապրող էակների այդ յաւիտենական ու անազորոյն մրցակցութիւննը անժխտեկի մի իրողութիւն է. մի փոքրիկ թիւ միայն—ամենից ուժեղները կամ ամենից աւելի ընդունակները, յարմարուողները—կարողանում է յաղթականորեն տանել այդ մրցումը...»

Մույլ, յուստես եղակացութիւններ...

Սպենսերն ևս, որ վաստակել է «Սոցիոլոգիական Դարվին» անունը՝ յանգում է այդ դաժան եղակացութիւններին. Էվլիւցիայի, պրոգրէսի ճանապարհը ողողուած է եղել և պիտի լինի միշտ մարդկային արտասուրով... Պիտի լինի միշտ ահեղ մրցակցութիւնը մարդկանց աշխարհում և պիտի լինին միշտ յաղթողներ ու յաղթուողներ...

Բարեբախտաբար, այդ եղակացութիւնները չեն համապատասխանում իրականութեան: Դարվինը ինքը այլ կերպ էր մտածում, երբ հարցը վերաբերում էր մարդկային աշխարհին: Այստեղ, մենք կը տեսնենք, որ բացի մրցումից, գոյութեան կոսից՝ ուրիշ համազօր գործոններ են հարապարակ դալիս, որոնց չնորիիւ, թոյլերի և հարստահարուածների էշպօնները փոխանակ ընկճուելու և չքանալու, կազմակերպուում են ի մի հօր, անպարտելի բանակ՝ ապագայի նուաճման համար...

Յամենայն դէպս, Սպենսերի, Հէկէլի և ուրիշ դարվինեան մտածողների այդ պեսսիմիստ եղակացութիւնները իրաւունք չեն տալիս մեզ, մի կարդ ուղղափառ մարքսիստների պէս, Ժխտել նրանց մեծ զիտական արժէքը և թեթև սրտով յայտարարել, թէ՝ «Ժամանակակից գիտութիւնը քուրժուազական է»:

Դառնանք Սպենսերին:

«Սոցիալական Դարվին»—աջող է որակումը: Դարվինի թէօրիայով ներշնչուած՝ նա հիմնեց դրական, պոզիտիվ սոցիօլոգիայի շնչքը, դուրս բերեց մարդկային հասարակութիւնը տարտամ հասկացողութիւնների աղջամուղից և որոշեց նրա տեղը տիեզերական զարգացման դրամայի մէջ:

Մինչ այն՝ մարդիկ ընդհանրապէս տեսնում էին հասարակական էվոլյուցիայի մէջ կամ աստուածային մատը, կամ հերոսների և զօրավարների կամքը, կամ կիմաների, միջավայրերի ազդեցութիւնը, կամ գաղափարների, մեծ մտածողների ուժը: Ֆատալիստներն էլ համարում էին ամբողջ պատմութիւնը մի տեսակ պատահար, ճակատազրի, Բատու-ի մի գործ:

Հասարակական երևոյթները ընութեան մէջ են և ուրեմն ենթակայ տիեզերական դէտերմինիզմին: Դարվինի թէօրիայով արդէն վարպուած էին մետաֆիզիքական աւանդութիւնները, որոնք մարդկութիւնից ստեղծում էին մի ջոկ աշխարհ, բընութիւնից դուրս, բոլորովին տարբեր կինդանական աշխարհից: Արդէն հաստատուած էր, որ մարդ-էակը կապուած է մանրիկ մոներների հետ՝ օրգանիզմների մի երկարածիք, անընդհատ շղթայով, որ նա վերջին աստիճանն է մի շարունակական էվոլյուցիայի, որ սկիզբն է առնում պրոտոպլազմային նախնական զանգուածից:

Դա մի անժխտելի ճշմարտութիւն էր, համաշխարհային մտքից սրբագործուած և էվոլյուցիօնիզմի անոնով որակուած: Դա մի կարդինալ ճշմարտութիւն էր ոչ միայն բիոլոգիական գիտութիւնների, այլ և սոցիօլոգիայի համար, մանաւանդ ժնախապատմական սոցիօլոգիայի համար, քանի որ այնուհետեւ մարդիկ բնականաբար սկսեցին որոնել հասարակական այլ և այլ երևոյթների արմատները անասնական կեանքում: Սակայն պէտք է ասել, որ այդ որոնումներն էլ որոշ սահման ունին, մի կարգ գիտնականներ շատ յափշտակուեցին նրանցով և տրամադրի են Ժխտել սոցիօլոգիայի ու հոգեբանութեան գոյութիւնը, իբրև ինքնուրոյն գիտութիւնների, յայտարարելով նրանց որպէս բիոլոգիայի ճիւղաւորութիւններ:

* * *

Սպենսերը ևս բիոլոգիայով յափշտակուողներից էր, բայց նա այնքան հեռու չգնաց: Մեթոդը, որով նա ղեկավարուում է իր հետազօտութիւնների մէջ, էթնոգրաֆիական է, ցեղազրական: Նա շահագործում է այն անհամար փաստերը, որ մատա-

կարարում է ժամանակակից վայրենի ցեղերի ուսումնասիրութիւնը:

Իր «Սոցիոլոգիական սկզբունքների» համարեա ամբողջ առաջին հատորը Սպենսեր նուիրում է նախամարդու ուսումնասիրութեան. ոչ մի ուրիշ գիտնական չէ ներկայացրել այնքան իմաստալի մի նախապատմական սոցիոլոգիա: Ճիշտ է, մեր հեղինակը աշխարհաշրջիկ ճանապարհորդութիւններ չէ արել ինչպէս Տայլոր, Լըբրոկ, Մարտ-Միւլէր և այլն. նա միմիայն շահագործել սիստեմի է վերածել նրանց տուած վկայութիւնները վայրենիների մասին. նա կառուցել է սոցիոլոգիայի շինքը իր առանձնասանենեակում... Այդ զարմանալի մարդը բիօլոգիական գիտութիւններով ևս (կենդանաբանութեամբ, սաղմագիտութեամբ, ֆիզիոլոգիայով և այլն) երբէք մասնագիտօրէն չէ զբաղուել, նա երբէք չէ աշխատել լաբորատորիաներում և այնուամենայնիւ, նրա գիտողութիւնները այդ բաժիններում դեռ այսօր ևս մեծ արժէք են ներկայացնում գիտական աշխարհին:

Ուշի ուշով և տարածութեան վրայ դիտում է Սպենսերը վայրենիներին, քննում է նրանց՝ իրանց ֆիզիքական, մտաւորու հոգեկան արտայայտութիւնների մէջ. և այդ նախնական ընութեանց յատկութիւններով նա բացատրում է վայրենի ցեղերի մէջ գոյութիւն ունեցող հասարակական հաստատութիւնները, որոնք յետոյ, պատմութեան ընթացքում աստիճանաւրար զարգացել են էվլիւցիայի օրէնքների համեմատ:

Նախ անհատներին է նա ուսումնասիրում, հասարակական այդ «միաւորներին» իրանց բոլոր կողմերով, ապա և քննում է այն երևոյթները, որոնք բղխում են այդ միաւորների փոխադարձ շփումից, նրանց համերաշխ գործակցութիւնից. .

Որքան բարդ ու բազմազան են այդ երևոյթները... Ընտանեկան կազմակերպութիւն, քաղաքական կազմակերպութիւն, կրօնական-կղերական կազմակերպութիւն, լեզու, արուեստ, գիտութիւն ևայլն—հասարակական կեանքի այդ բոլոր տարրերը ազդում ու փոխազդում են յաւիտենապէս, և սոցիոլոգիայի նպատակներից մինն է ցոյց տալ, թէ ինչպէս այդ անվերջ այլազանութիւնից առաջ է գալիս մի ներդաշնակ ամբողջութիւն, որ մենք անուանում ենք հասարակութիւն:

Ի՞նչ է մարդկային հասարակութիւնը...

Սպենսեր պատասխանում է, որ դա անհատների մի ազգական է (agrégaie; շեղակոյտ), բայց ոչ պատահական, առանց յարակցութեան ու յարատեսութեան: Հասարակութիւնը մի կոնկրետ էակ է, որ ապրում է ամբողջ սերունդներ ու նոյնիսկ

դարեր շարունակ Նա մի կենդանի իրականութիւն է, մի մարմին, օրգանիզմ, նման բիոլոգիական օրգանիզմներին:

Եւ Սպենսեր երկարօրէն համեմատում է երկու հասկացողութիւնները, հասարակութիւնը և օրգանիզմը (խօսքը անհատական բարձր տեսակի՝ օրգանիզմի մասին է, մի մարդու կամ բարձր կենդանու), սահմանում է նրանց մէջ բազմաթիւ նմանութիւններ, անալոգիաներ:

Հասարակութեան և օրգանիզմի նմանութեան գաղափարը պատկանում է իսկապէս Փրանսիացի Օգիսատ Կոնտին, որ առջին անգամը մտցրեց սոցիոլոգիան գիտութիւնների շարքը, իրու ինքնուրոյն մասնագիտութիւն:

Սպենսերը տուեց այդ գաղափարին ընդարձակ զարդացում և կիրառութիւն: Հասարակութիւնը օրգանիզմ է, ասում է նա, և օրգանիզմն էլ հասարակութիւն է: Մարդուց սկսած մինչև անամսական սանդուխքի ամենաստորին աստիճանները՝ կինդանի էակները ներկայանում են մեզ բարդ ադրեգատների ձևով, կազմուած անհամար բջիջ—անհատներից ու օրգաններից: Այլպէս է ուսուցանում Վիրլովի հոչակաւոր բջիջային թէօրիան:

Որտե՞ղ են սակայն նմանութիւնները, ինչ առնչութիւն կայ մի մարդկային հասարակութեան և մի կենդանու կամ մարդու միջև: Սպենսեր պատասխանում է, որ երկուսն էլ առում են, թէ հասարակութիւնը և թէ անհատական (մարդու կամ կենդանու) օրգանիզմը: Եւ աստիճանաբար աճելով երկուսն էլ ստանում են միշտ աւելի ու աւելի կատարեալ կերպարանը:

«Ստորին կարգի մի էակ կամ բարձր կենդանու մի սաղմ գրեթէ բոլորովին հոմոֆէն է, միապաղադ, բայց նրա զանգուածը աստիճանաբար աւելանալով նրա մասերը զանում են միշտ աւելի բազմաթիւ և աւելի որոշ: Զէ որ, ասում է Սպենսեր, նոյն երևոյթը նկատելի է և մարդկային հասարակութեան մէջ. նա էլ արտայայտում է երկու միաժամանակ կատարուող շարժումները—ամրողացում և զանագանաւորում (intégration, différenciation) *):

«Գրեթէ բոլորովին հոմոֆէն, քանի դեռ փոքրիկ է, հասարակութիւնը աճելով ու ծաւալուելով արտադրում է բաժանումներ ու ենթաբաժանումներ միշտ աւելի բազմաթիւ և աւելի շեշտուած: Եւ երբ գալիս է նրա կատարեալ հասունութեան բրջանը, նա սկսում է կազմալուծուել...»

*) Տես «Մուրճ», յունուար 1905 թ.:

«Թէ մարդկային հասարակութեան և թէ անհատական օրգանիզմի մէջ, որքան աւելի է բարդանում կազմը, այնքան աւելի են բազմանում պաշտօնները, փունկցիաները։ Ամենաստորին կարգի կենդանին չունի ոչ սոտամոքս, ոչ շնչառութեան օրգաններ, ոչ անդամներ։ Նա կատարում է իր բոլոր պաշտօնները իր մարմինի բոլոր մասերով։ Գկայ ֆիզիոլոգիական աշխատանքի բաժանում, ոչինչ է նոյնպէս մարմին մասերի փոխադրձ կախումը։

«Բարձր կենդանու մէջ, ընդհակառակը, օրգանները բազմաթիւ են, պաշտօնները որոշուած, իրարու ստորադրուած, իրարից կախուած։»

Նման երեսոյթներ և հասարակութեան մէջ, նախնական վայրենի մարդկային համայնքներում գրեթէ չկայ աշխատանքի բաժանում։ Ամեն մի անդամ ինքն է գոհացնում իր կարիքները, նա և՛ որսորդ է, և՛ զինուոր-ռազմիկ, և՛ իր տունն ու գործիքները շինող... Բայց ժամանակի ընթացքում համայնքը հետզհետէ զարգանալով՝ աշխատանքը բաժանում է, մասնաւորուում, պաշտօնները բազմանում են ու որոշուում։

Ուրիշ բազմաթիւ նմանութիւններ ևս. օրինակ, ջղային սիստեմը անհատական օրգանիզմում համապատասխանում է զինուորական կառավարութեանը՝ հասարակութեան մէջ։ Արիւնատար անօթները համապատասխանում են ճանապարհներին ու երկաթուղիներին՝ բարձր քաղաքակիրթ հասարակութիւնների մէջ և այլն և այլն։

* *

Սպենսերը շատ յարձակումներ կրեց իր այդ «օրգանական թէօրիայի» առիթով։ Նրա սահմանած անալոգիաները մեծ մասմբ արհեստական են, կամայական։ Թէօրիան ունի ընդարձակ գրականութիւն և շատ ուրիշ ականաւոր ներկայացուցիչներ, Շէֆլէ, Լիլիէնֆելդ, Վորմն և այլն։ Ոմանք Սպենսերից աւելի հեռու են զնում և համարեա նոյնացնում են հասարական ու անհատական օրգանիզմները։

Շէֆլէ, որ մեռաւ գրեթէ Սպենսերի հետ միաժամանակ, գրել է մի ընդարձակ ու հեղինակաւոր աշխատութիւն «Հասարակական մարմին կազմ» ու կեանքը» բնորոշ վերնագրով (Bau und Leben des sozialen Körpers), ուր նա մանրամասնորէն ներկայացնում է մարդկային հասարակութեան անատոմիան, ֆիզիոլոգիան և հոգեբանութիւնը։

Այդտեղ հասարակական այլ և այլ հաստատութիւնները նմանեցւում են անհատ-մարմին օրգաններին, մարդիկ ու ապրանքները (աշխատանքի արդիւնքները) նմանեցնում են հիւս-

ուածքներին, ընտանիքը՝ օրգանական բջիջին, մարդկային մկանները՝ հասարակութեան ուժին ու գեղարուեստին ևայլն:

Ո՞չ, յարատե ժողովրդականութիւն չունեցան և չէին կարող ունենալ անալոգիայի այդ փորձերը: Իրանք իսկ հեղինակները ի վերջոյ խոստովանեցին նրանց կամայական ու խախուտ լինելը:

Մարդկային հասարակութիւնը մի մարմին է, ի հարկէ, բայց նա նման չէ կենդանական մարմնին: Անասնութեան շարունակութիւնը լինելով հանդերձ՝ մարդկութիւնը ներկայացնում է իրանից մի տարրեր աշխարհ, իր տարրեր յատուկ արտայայտութիւններով:

Թէպէտե բարձր կենդանիների ու նոյնիսկ մարդու հոգեկան արտայայտութիւնները վերջին քննութեան մէջ վերածում են զուտ կենսական, Փիզիոլոգիական հակումներին, պրոտոպլազմի մութ, անորոշ գրգիռներին, այնուամենայնիւ, մարդու հոգեկան աշխարհը այնքան մեծ բարդութիւն ունի, այնքան բնորոշ բովանդակութիւն, մարդկային հոգեկան արտայայտութիւնները այնքան հեռու են պրոտոպլազմի զուտ օրգանական պահանջներից, որ կարելի է ասել, թէ մոնէրից մինչեւ մարդը մի անանցանելի խորիսորատ կայ, որ այդտեղ տարրերութիւնը լոկ քանակի ու աստիճանի մէջ չէ, այլ և որակի և էութեան մէջ:

Մարդկային հասարակութիւնը, ուրեմն, կենդանական մի պետութիւն չէ, այլ մի տեսակ զերօրգանիզմ (superorganisme): Եւ սոցիոլոգիան լոկ բիոլոգիայի ճիշդարութիւնը չէ, այլ մի նոր, բարձր գիտութիւն, գերօրգանիզմի գիտութիւնը:

Սպենսերը ևս չէ թագցնում, որ կայ «ծայրայել տարրերութիւն մի հասարակութեան և մի օրգանիզմի միջև, Եւ ասում է՝ ինչու: «Կենդանու մասերը կազմում են մի կոնկրետ ամբողջութիւն, այն ինչ մարդկային հասարակութիւնը մի տարրոց, անջատ (discret) ամբողջութիւն է:»

Մի տեղ բաղադրիչ տարրերը շղթայուած են իրար, միւս տեղ՝ հասարակութեան մէջ—այդ տարրերը ցրուած են, աղատ: Կայ մի աւելի ցայտուն տարրերութիւն: կենդանու կամ մարդու մօտ, ասում է Սպենսեր, զիտակցութիւնը կենդրունացած է մարմնի մի փոքրիկ մասի մէջ,—միւս մասերը մօտաւորապէս դուրկ են նրանից: Մինչդեռ հասարակութեան մէջ նա տարածուած է ամեն տեղ...

«Զի կարելի համեմատել հասարակական օրգանիզմը, որ ցրուած է, անհամաչափ և գիտակից իր բոլոր միաւորների մէջ, —չի կարելի համեմատել նրան անհատական օրգանիզմների

որևէ տիպի հետո: Միակ ընդհանուր կէտը, որ կայ նրանց մէջ, այդ այն է՝ որ կազմակերպութեան հիմնական սկզբունքները ընդհանուր են մէկին և միւսին:

Սպենսերի սովորաբար պայծառ միտքը դժուար կացութեան մէջ է դնում ընթերցողին իր այդ հակասական յայտնութիւններով: Նման, բայց և «ծայրայեղ տարրեր»... Զարմանում էր, ինչու է նա այնքան երկար ծանրանում նմանութիւնների վրայ, ինչու է երկու օրգանիզմի անալոգիան այնքան մեծ դեր խաղում սպենսերեան սոցիոլոգիայի մէջ:

* *

Անալոգիայի փաստով յափշտակուած՝ անհատական օրգանիզմների նման, հասարակական օրգանիզմի մէջ ևս կայ արտաքին օրգանների մի սիստեմ, որը յարաբերութեան մէջ է դրսի հետ, պաշտպանուելու և յարձակուելու կոչումով՝ և կայ ներքին օրգաններիմի սիստեմ, որը ապահովում է հասարակական մարմնի սննդառութիւնը:

Նայած թէ որն է երկու սիստեմներից գերակշռողը՝ հասարակութիւնը կամ գլխաւորապէս զինուորական է հիմնուած բանի գործակցութեան վրայ (Coopération forcée), կամ թէ գլխաւորապէս ինդուստրիական, հիմնուած կամաւոր գործակցութեան վրայ:

Էվոլյուցիան, որ Սպենսերի մօտ նոյնանում է առաջադիմութեան, «արոգրէսի» հետ, գոյութեան կրիւը, բընական ընտրութիւնը առաջ են բերել նախ զինուորականութեան, միլիտարիզմի զարգացումը և կառավարութիւնները, բայց նրանք արդէն բերում են մեզ և պիտի բերեն միշտ աւելի ու աւելի, ճակատագրական ամհրաժեշտութեամբ, ինդուստրիալիզմի (ճարտարարուեստի) և լիբերալիզմի զարգացումը»: Վերջինը Սպենսերի կարծիքով անբաժան կապուած է ինդուստրիայի առաջադիմութեան հետ:

Այս թէօրիան կազմում է կենտրոնը սպենսերական սոցիոլոգիայի: Նրանից բիմում են բոլոր միւս թէօրիաները, որ Սպենսեր տալիս է քաղաքական, տնտեսական, կրօնական, ընտանեկան էվոլյուցիայի մասին: Նա ցոյց է տալիս, թէ ինչպէս ճարտարարուեստի զարգացման շնորհիւ՝ քաղաքական էվոլյուցիան ձգուում է միշտ դէպի քաղաքական աղաստութիւն, տընտեսական էվոլյուցիան՝ դէպի առևտրի ու աշխատանքի աղատութիւն, կրօնական էվոլյուցիան՝ դէպի խոճի աղաստութիւն, ընտանիքի էվոլյուցիան՝ դէպի կանանց և երեխաների իրաւունքների ճանաչումն ու աղաստութիւնը:

Միջ. Յովհաննիսեանց